

ԵՐԵՎԱՆԻ ՏՄՈՐԱՅԻՆ ԱՆՎՈՒՆԻ ԱՅԿԱՆԵՆ

Աստղիկ Ղոնդախչյանին

Et c'était le dernier amour
du soir antique...

ALBERT SAMAIN

ԿՍՐՄ, 1913

1. Ճ Ա Մ Փ Ի Ն ...

Օրորվելով կառքն էր վազում սրբնթաց
Դաշտի միջին՝ ճանապարհով ցեխապատ:
Քոնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց
Օրն էր մարում հիվանդոտ ու մեղմ-վշատ:

Օրորվում էր կառքը, վազում ու վազում:
Կառապանը երգում էր մի ինչ-որ երգ:
Թոքախտավոր կինն էր մոտիս դառն հազում:
Մութն էր գրկում արևմուտք ու արևելք:

Թունն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Ազոավները անցնում էին քրքջալով:
Թոքախտավոր կիներ տխուր հեծկլտաց:
Քամին անցավ՝ մեկի մասին ողբալով:

Նվ կառասպանն, օրորվելով, դեռ երկար
Նրգում էր իր օրերի երգը անգույն:
Գնում էինք: Մուր — չգիտեմ: Վերջ չկար:
Գնում էինք: Անխոտ: Անձայն: Ու անքուն...

2. ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐԻՆ

Քննել շի՛ր լինում...

Հիմա, երբ այնպես ուզում եմ քնել,
Ամե՛ն, ամե՛ն ինչ մտքիցս հանել:
Հայացքներս՝ անփակ՝ թափառում են լուռ—
Ու միտքս, տարտամ, դեղերում է մութ
Դաշտերում ախուր:

Մթության դրկում լալիս է դողողջ
Լույսը լապտերիս՝ մեռնող աղջկա
Հոգեվարքի պես...
Մեկը բախում է դռներն անցածի—
Ու հիշում եմ քեզ:

Մոռացված երգի նվազի նման
Դողում է հողիս լույս մատների տակ—
Եվ ահա մեկ-մեկ շարվում են իմ դեմ
Պատկերներ, դեմքեր, որ կտրել էին
Առանց հիշատակ:

Այնտեղ, մութի մեջ հայտնվում է ահա
Տեսիլդ գունատ ու տխրադալուկ,—
Օրերի անհայտ մշուշից ելած
Գունատ այցելու:

Ու հիշում եմ ես անձրևոտ մի օր—
Մի հին իրիկուն.
Հեռու երգերի խնդալառ օրոր,
Հարսանքի հանդես.—
Մազող անձրևի կաթիլների տակ
Կանգնել էի ես...

է՛, քնե՛լ, քնե՛լ...

Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր

Ու շմտածեմ ոչնչի մասին:

— Մի՞թե, երբեմն, չէի՞նք միասին...

— Ա՛խ, օրոր ասա, անդորր ու օրոր:

Քնե՛լ եմ ուզում՝ գիշերն անց կացա՛վ...

— Երա՞զ էր արդյոք, զառանցա՞նք, թե ցա՛վ...

— Ցա՛վ, ցա՛վ էր, անշուշտ:

Դու երբե՛ք, երբե՛ք ինձ շեւ ժպտացել—

Քո ժպիտն անգամ ցա՛վ է թվացել

Իմ հոգուն տկար...

Ես քեզ կանչեցի երկա՛ր ու երկա՛ր—

Դու շեկար, շեկար,—

Ցանկացա լինել քո դեմ մի հլու

Ու անկամ գերի—

Եվ ես իմ սիրով քեզ ձանձրույթ բերի...

Օտա՛ր էր հոգիս քեզ համար, ինչպես

Չտար դաշտերից բերած ծաղկեփունջ:

Տանջանքի վարդեր, հույզի ծաղիկներ,

Ծրազի աստղեր, հույսերի ցուլքեր—

Ու կարմի՛ր, կարմի՛ր խաշխաշներ ցա՛վի.—

Կյս ծաղիկներով զարգարված հոգիս քեզ նվեր
բերի,

Որ քո կույս հոգին իմի հետ ցա՛վի...

Ու ես շեմ հիշում, թե ինչպե՞ս մի օր —

Օտար, անմեկին —

Ես քեզ կորցրի նոր կյանքի շեմքին...

Չէ՛, դու գնացիր, չգիտեմ թե ուր:

Ես էլ գնացի: Իհարկե՛ն, այնտեղ,

Ուր ապրել ես դու երկար ժամանակ—

Ապրել չէ՛ր լինի:—

Չէ՛ր լինի տեսնել լույսեղբ ձեր տան,

Չէ՛ր լինի տեսնել լայն փողոցը ձեր,

Որ մինչև հիմա ես շեմ մոռացել...

Թողնենք, ախ, ի՞նչ հոգ.
Չէ՞ որ շգիտե, շգիտե ոչ-ոք,
Թե ինչո՞ւ կյանքում այսպես է եղել.—
Սերը մեզ համար—արցունք ու արյուն,
Սերը մեզ համար մահվան գին ունի,
Իսկ կնոջ համար — հրճվանքի գինի...

Այս անքուն, անքուն ու լուռ գիշերին
Ախ, էլ շեմ ուզում վերհիշել կրկին
Անցյալը անմիտ ու անմխիթար.
էլ ինչո՞ւ ես դու գալիս անդադար
Եվ ուշ գիշերով փորել ես ուզում
Իմ հոգին տկար...

Դրա համա՞ր ես դու այստեղ եկել,
Օ, նենգոտ տեսիլ...
Ուզո՞ւմ ես հոգուս վերքերը պեղել,
Որի գանձերը շուգեցի՞ր տեսնել...

Օ, զզվելի՛ կին,—
Քեզ արատ է պետք, սին արատ հոգու,
Որ լավ ծիծաղես ու շարկամ խնդաս—
Եվ ամբողջ հոգով հրճվանքից թնդաս...
Ուզո՞ւմ ես՝ պատմեմ, թե ինչպես հանկարծ
Ինձ համար փոխվեց ամեն, ամեն բան—
Եվ ես կորցրի երազի ճամփան...

Մի գիշեր էր մութ: Անձրև էր գալիս:
Խավար էր իջել իմ մթնած հոգում:—
Ամայությունն էր հեկեկում այնտեղ
Հին, անվերադարձ երազների տեղ:
Եվ ես դուրս եկա: Ցեխոտ փողոցով
Քայլեցի երկար:
Չգիտեմ, թե ո՞ւր. ինձ համար արդեն
Ճանապարհ չկար...

Երկա՛ր քայլեցի:
Եվ իմ դեմ աճա — մի երկա՛ր փողոց:

Հեռուսմ — դեղին, տարտամ կրակներու
Եվ ես մոտեցա այն կրակներին,
Որոնք իմ սրտին մի հի՛ն լուր բերին...
Մի հին լուր՝ հոգուս մեջ պահված ծածուկ—
Եվ ես այն շեմքը անցա կամացուկ...

Ու... այս եմ հիշում՝
Մի հին անկողին— թաղված մշուշում:
Ու մի մերկ մարմին:
Ու ցավոտ, ճնշված հեկեկանքը իմ...
Ու դուրս եկա ես:
Զգացի միայն, որ ցուրտ է, քամի,—
Որ կյանքն ինձ համար էլ կատակ է մի...

Ինձ համար մեռալ ամեն սրբութուն:
Գնա՛, սիրելիս:
Թող կյանքը գլխիս մորիկներ տեղա
Ու մոխիր ցանի —
էլ ո՛չ մի զղջում իմ երազը հին
Ետ շի դարձնի...
Գնա՛, սիրելիս,
Ու թող մի վայրկյան քեզ մտքից հանեմ,—
Ուզում եմ քնեմ — ախ, ինչպե՞ս քնեմ...

3. Մ Ե Ռ Ե Լ Ո Ց

Երեկոն անձրևոտ էր ու թաց:
Փողոցները — դատարկ, անաղմուկ:
Ու քամին էր անցնում սրբնթաց
Ու տամուկ:

Ու գիշերը իջնում էր մթին.
Երևում էին մութ հեռում
Փողոցի կրակներն երեքուն՝
Հանձնված ամոթին ու ստին:

Ու գնում էի ես համրընթաց,
Ինքս ինձ քո անունը ասում:
Հեռում ինչ-որ մեկը լսնդաց
Փողոցի անձրևոտ երազում:

Ու օրհնում էի ես իմ սրտում
Մոռացված դամբարանը քո մութ:
Մեկն ասաց, որ ստում եմ, ստում,—
Ու լսվում էր հեռվում մեկի լացն անօգուտ...

1913

Կարս